

# ԱՄՆ. ԻՆՉ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ

*Մինչ բուշականները շարունակում են ավիրել երկրի գանձարանը, իսկ այժմ նաեւ ռազմական պետքերի ուղղված հասարակական ապահովագրման անձեռնմխելի Յիմսադրամը, նրանք թույլ են տվել Յետախուզման Դաշնային գրասենյակին եւ Յետախուզական Գլխավոր Վարչությանը կամ վերջնականապես կատաղել, կամ էլ առահասարակ ոչինչ չանել, դնելով մեզ՝ առաջին եւ, հասարակության խնդրանքով, վերջին համաշխարհային կայսրությունը Չմրուխտե Զաղաքի հրաշագործի վիճակի մեջ, որը վախենում է, որ բռնորդ կբացահայտեն, որ ինքը բոլորովին էլ հրաշագործ չէ:*

Գոր Վիդալ

**Իրոք, ի՞նչ է կատարվում Ամերիկայի հետ: Այն, որ ինչ որ բան կատարվում է, արդեն կարծես թե ոչ ոք չի կասածում: Դրանք այդ ի՞նչ արեցին Յարավալպիայում, այդ ի՞նչ են ուզում անել Իրաքում: Ըստ տարբեր երկրներում կատարված հարցումների Ամերիկայի եւ ամերիկացիների նկատմամբ ատելությունն աշխարհում միայն անցած տարվա ընթացքում աճել է շուրջ 25 տոսկոսով: Իսկ դեռ մի քանի տարի առաջ, քչերն էին միայն խիզախում հարցականի տակ դնել այդ երկրի արժանիքները: Դեռ ընդամենը մի տասնամյակում տարի առաջ, Արեւելյան Եւրոպայի երկրները եւ մենք գտնվելով «չարի կայսրության» լծի տակ հայացքներս ուղղել էինք դեպի արդար, մարդկային, բարոյական, ուժեղ, կատարյալ եւ իհարկե՝ ժողովրդավարական այդ երկիրը, հավատալով, որ «զապաղ նամ պոմոժետ»...**

«Պոմոժ», թե «նե պոմոժ», կարելու չէ: Բայց սիւս ԽՍՀՄ-ը փլուզվեց եւ դեն նետելով «երկաթե վարագույրի» ժանգոտած բեկորները մենք կարողացանք ավելի լավ տեսնել հեռվում առկայծող ամերիկյան «փարոսի» լույսը: Եւ այն քեզ տարօրինակություն. աստիճանաբար սկսեց պարզվել, որ վերոթվարկյալ մակնդիրները այնքան էլ չեն համապատասխանում այդ երկրին: Աստիճանաբար չբացվեցին ամերիկյան արդարության, մարդկայնության, բարոյականության եւ նույնիսկ (սոսկայի է մտածել) ժողովրդավարության մասին առասպելները: Վերջինս, մասնավորապես, հոդս ցնդեց, ներկայիս նախագահի ընտրության ընթացքում, երբ մի ամբողջ ամիս «կոմպուտերացված» այդ երկրում չէին կարողանում հաշվել թեկնածուներին տրված ձայները, ինչ-որ անկապ վայրերում հայտնաբերվում էին դատարկ քվեաթղթիկների կապոցներ եւ այլն: Եւ վերջ ի վերջո ո՞ր թեկնածուն նախագահ ճանաչվեց. այդ. այն, որի եղբայրը ամենավիճահարույց նահանգի նահանգապետն էր:

Շուտով կասկածի տակ հայտնվեց նաեւ տնտեսական հզորությունը, երբ իրար ետեւից սկսեցին փլուզվել գերհզոր թվացող ընկերությունները, իրենց հետ գերեզման տանելով եւս մի առասպել. ամերիկյան սկզբունքներով կազմակերպված շուկայի կատարելության մասին: Կարելի է ասել, որ այս պահին դեռեւս վերջնականապես չի գոհվել վերջին առասպելը՝ ամերիկյան ռազմական ուժի մասին, թե բոլոր նախորդների տապալումից հետո սրա առասպելական լինելը աստիճանաբար նույնպես սկսվում է գիտակցվել:

Սակայն որտեղի՞ց ծնվեցին այդ առասպելները: Դժվար չէ նկատել, որ դրանց հիմքում այդ երկրի աննախադէպ հարստությունն է: Բայց հարստությունն այդ որտեղից, այդ ինչպե՞ս ծնվեց ետպատերազմյան տարիների ամերիկյան տնտեսական հրաշքը: Յրաշք, որի կողքին ճապոնական կամ չինական «հրաշքները» չեն դիտվում: Եւ իրոք, արեւելյան երկրները տնտեսական թռիչք գործեցին հենվելով մի կողմից սեփական հարստագույն մշակութային, պետական հազարամյա ավանդույթների վրա եւ շնորհիվ հենց այդ նույն Ամերիկայի օգնության: Իսկ ո՞րն էր ամերիկյան հրաշքի «նյութական հիմքը»: Չմոռանանք, որ սա թեկուզ եւ խոշոր, բայց հազիվ մի երկու հարյուր տարվա պետություն էր, որը չէր հիմնված մշակութային որեւէ ավանդույթների վրա, քանի որ իրեն նախորդած բռնորդ մշակութային եւ դրանց կրողներին ներկայիս ամերիկացիների նախնիները՝ Եւրոպայից գաղթած արկածախնդիրներն ու բռնավորները բարեհաջող կերպով ոչնչացրել էին: Իսկ սեփական մշակույթ նրանք չունեին, քանի որ հեռացել էին կամ արտաքսվել էին Եւրոպայից հենց այն պատճառով, որ հեռու էին ցանկացած տեսակի մշակութային: Արտասահմանյան ներդրումներ էլ ետպատերազմյան տարիներին չէին կարող լինել: Այնպես որ լուրջ թռիչքի համար հիմքեր չկային: Պնդումները, թե այդ թռիչքը պայմանավորված էր ժողովրդավարությանը իբր հատուկ առավելություններով անհիմն են, քանի որ նախ մենք արդեն գիտենք թե ինչ բան է ժողովրդավարությունը «ամերիկյան ձեւով», իսկ մյուս կողմից, ինչո՞ւ ժողովրդավարության «ուժը» սկսեց գործել հենց այդ պահին, եւ ոչ թե, ասենք մի հիսուն տարի շուտ:

Եւ իրոք այդ երկիրը մինչեւ 20-րդ դարի սկիզբը թաքանում էր իրեն վայել արագությամբ, հինգից տասն տարով ետ մնալով (համեմայն դեպս՝ արվեստի եւ տեխնիկայի ասպարեզում) Յին աշխարհից: Ամերիկացի գյուտարար կոչվածները, լավագույն դեպքում սոսկ կատարելագործում էին Եւրոպայում կատարված գյուտերը, ոչ ավելին: Այդպիսին էր եւ Ֆրանկլինը էլեկտրականության բնագավառում իր ուսումնասիրություններով, եւ Էդիսոնը՝ որը «հայտնագործեց» դրանից հինգ տարի առաջ Եւրոպական պետություններում արտոնագրված Լոդիզիի շիկացման լամպը: Կերպարվեստի եւ երաժշտության ասպարեզում այդ երկիրն առհասարակ որեւէ բան չստեղծեց, լիովին շարունակելով իր անմիջական նախորդի՝ Անգլիայի «ավանդույթներն» այդ բնագավառներում: Իսկ 20-րդ դարի երկրորդ քառորդ Ամերիկյան մուտք գործեց առհասարակ խայտառակ տնտեսական վիճակում: Փատորեն, որքան էլ դա տարօրինակ է, բայց ամերիկյան «հրաշքը» սկիզբ է առնում ճապոնական եւ գերմանական «հրաշքներից» ընդամենը մի՛ քանի տարով շուտ: Եւ հարց է առաջանում. արդյո՞ք դա պատահական էր:

## Բուրգեր եւ բանկեր

Ուրեմն ի՞նչ կատարվեց այդ պահին: Յասկանալու համար, որոշ ժամանակով մոռանալք ամերիկացիներին եւ հիշենք մի հետաքրքիր երեւոյթ, որը կոչվում է ֆինանսական բուրգ:

Ի՞նչ է դա: Սովորաբար այն սահմանվում է որպէս *կազմակերպություն, որի սկզբնական անդամների ներդրումները բերում են շահույթներ՝ հետագայում անդամագրվածների ներդրումների հաշվին*: Ներդրում կատարելը հնարավոր անդամին գրավիչ դարձնելու համար այդ ներդրման դիմաց կարող են տալ որեւէ չափազանց ցածր ինքնարժեք ունեցող մի ապրանք (սովորաբար՝ արժեթուղթ), որն առնելու միակ կամ հիմնական իմաստը՝ դրա վերավաճառելն ու այդ միջոցով լրացուցիչ գումար ստանալն է: Բնական է, որ վերավաճառելու հնարավորությունն ակնհայտ պիտի լինի: Եթէ դա ինքնին պիտանի բան է, կամ պիտանիության տպավորություն է թողնում, օրինակ՝ որեւէ «իմաստուն» գիրք է, կամ ճաղատությունը վերացնող «դեղ» եւ այլն, ապա դա էապես օգնում է վաճառքին եւ համոզիչ է գնորդի համար (շուտ թե ուշ, մտածում է, կվաճառեմ. վրաս չի մնա): Այս դեպքում ֆինանսական բուրգն անվանվում է *ցանցային վաճառք*: Եթէ իրն ինքնին պիտանի չէ (արժեթուղթ), անհրաժեշտ է լինում լրացուցիչ բարոզւոյթուն: Վճռորոշ դեր է խաղում բուրգը նախաձեռնողի կամ հովանավորողի հեղինակությունը: Յատկապէս բուրգի հիմնդրումը հեշտանում է տնտեսական խառնաշփոթ վիճակներում, երբ մանկակցման ուրվականից սարսափած քաղթեմին պատրաստ է լինում հավատալ ունեցվածքը փրկել կամ նույնիսկ բազամապատկել խոստացող ցակացած մեկին: Ինչու եմ շեշտում քաղթեմին: Որովհետեւ յուրաքանչյուր տրամաբանող մարդ հասկանում է. ոչինչից ոչինչ չի կարող ստեղծվել, եւ տվյալ պահին եղած հանրային ունեցվածքը կարող է միայն վերաբաշխվել այս կամ այն կերպ. մի տիրոջից անցնելով մյուսին: Եւ ինչո՞ւ պիտի ինչ-որ մեկը ձեռնարկություն հիմնի այդ հարստությունը անձանոթ մարդկանց հանձնելու նպատակով: Պարզ է, որ եթէ մեկը բուռն գործունեություն է ծավալել ֆինանսական ոլորտում, ապա հանուն հենց ի՞ր շահի:

Եւ զուր չեն նման ձեռնարկությունները բուրգի սկզբնաւելով կազմակերպում: Եթէ մեկն ուզում է իր ձեռքում կուտակել հանրային սեփականությունը, իրեն անհրաժեշտ են օգնականներ, որոնց պետք է վարձատրել: Սրանց նույնպէս պետք են օգնականներ, վերջիններիս նույնպէս: Ֆինանսական բուրգերի հարմարությունն էլ հենց այն է, որ դրանց գաղափարի մեջ այդ շղթան ներդրված է: Որքան շատ մարդու համոզես գնել քո ապրանքը, այնքան շատ կմնա թեգ: Պարզ է նաեւ, որ շղթան այդ չի կարող անսահման երկար լինել: Աճելով երկրաչափական հարաճի օրէնքով խաբվածների թիվը արագորեն մոտենում հագեցման շեմին, երբ սպառվում է տվյալ քաղաքի, կամ երկրի բնակչության ոյուրահավատ գանգավածը: Որքան մեծ լինի այդ գանգվածը այդքան ավելի շահած կլինեն այդ բուրգի գազաթաններն մասում գտնվողները: Այնպէս որ մեր տեղական բուրգերը, ոչ մի համեմատության մեջ չէին մտնում Ռուսական ՄՄՄ-ների, կամ խոյոր-ինվեստների հետ:

Բայց ՄՄՄ-ը այնքան էլ հասարակ բուրգ չէր: Բայն այն է, որ գույթուն ունի ֆինանսական բուրգի երկու սկզբունքային տարբերակ, որոնք կարելի է պայմանականորեն անվանել *պարզ բուրգ* եւ *բուրգ՝ հետադարձ կապով*: Պարզ բուրգի դեպքում խաղի մասնակիցները շղթայով վերեւ են փոխանցում որոշակի գումար, ակնկալելով, որ իրենք էլ գումար կստանան ներքեւից: Երբ ոյուրահավատների թիվը սպառվում է խաղախոյթան նախաձեռնողները «թռնում են»: Ահա եւ ամենը:

Սակայն բուրգի ստորոտից դեպի գագաթը փոխանցվող գումարը սովորաբար խոշոր չի լինում: Խաղի մեջ մտնելու համար պահանջվող գումարի փոքր չափը, սովորաբար նպաստում է մեծ գանգվածների ներքաշմանը նման խաղախոյթանների մեջ, բայց եւ սահմանափակում հնարավոր «շահույթի» չափը: «Գուցե բախտս կբերի», մտածում են ամենահեռատեսները, խաղի մեջ մտնելով: Կորցնելու դեպքում էլ նա կորցնում է միայն այդ փոքր գումարը: Սակայն եթէ նրան համազեն, որ ամեն ինչ արդար է, եւ ներդրած գումար չի կորչի, նա արդեն կբերի իր ողջ ունեցվածքը: Իսկ համոզվելու լավագույն եղանակը սեփական փորձն է: Այ՛ թե նրան հնարավորություն տալ ցանկացած պահին ետ ստանալ իր ներդրված գումարը եւ դեռ լրացուցիչ շահույթ ստանալ, դա իրոք տպավորիչ կլինի (ի դեպ, վերելում բերված սահմանում վերաբերում է հենց այս դեպքին): Դրա համար խաղի նախաձեռնողները պիտի մի փոքր համբերություն ցուցաբերեն, եւ խաղի մեջ նորանոր ներգրավվածներից ստացված գումարի մի մասը վերադարձնեն նրանց, որքեր իրենց շատ զգուշավոր համարելով փորձում են ստուգել նախաձեռնողների «ազնվությունը»: Դրանով կապահովվի հետադարձ կապը խաղացողների հետ: ՄՄՄ-ի նախաձեռնողներն այդպէս էլ արեցին: Նրանք կազմակերպեցին իրենց արժեթղթերի ազատ վաճառք եւ ընդունում: Առաջին շահույթների ստացվելուց հետո արժեթղթերի հեղինակությունը արագորեն սկսեց աճել: Շուտով մարդիկ արդեն սկսեցին նույնիսկ վաճառել սեփական ունեցվածքը, երբեմն, բնակարանները՝ ներդնելու համար խաղի մեջ: Առավել զգուշավորները մտածում էին, որ հենց իրենք կրկնապատկեն իրենց ունեցվածքը, անմիջապէս դուրս կգան խաղից: Բայց հարցն այն է, որ երբեք չգիտես, թե երբ են նախաձեռնողները որոշելու դադարեցնել խաղը: Եւ հենց այդ զգուշավորներն էլ հաճախ տանուլ էին տալիս:

Բայց կա մի վտանգ: Եթէ արժեթղթերի կրողների մի շոշափելի մասը անսպասելիորեն պահանջի իր փողերը, ապա կազմակերպությունը կկործանվի անմիջապէս, քանի որ այդքան փող տվյալ պահին նա չի կարող ունենալ: Չէ՞ որ գումարի մի մասը նախաձեռնողները ծախսում են. մասամբ՝ սեփական կարիքների համար, մասամբ էլ՝ նորանոր գանգվածներին մոլորեցնելու նպատակով կեղծ «շահույթներ» ապահովելու համար:

Այս վատնազն, ի միջի այլոց, սպառնում է ցանկացած նախաձեռնությանը, որը հիմնաված է դրամագուլիս կուտակելու վրա: Նաե՛ւ՝ բանկերին: Ի վերջո բանկը նույն սկզբունքի՝ ֆինանսական բուրգի վրա է հիմնված. մարդիկ բանկ են բերում իրենց փողը՝ այն հուսալիորեն պահելու ու նաե՛ւ՝ գոնե որոշ չափով ավելացնելու համար: Տարբերությունը միայն հիմնադիրների ծրագրերի մեջ է. արդյո՞ք նրանք ծրագրում են «թռնել» եւ «զգել» իրենց հաճախորդներին, թե՛ մտադիր են կուտակված գումարով ծավալել որեւէ տնտեսական գործունեություն եւ գործով ապահովել ստացվելիք շահույթը: Սակայն եւ այս դեպքում նույնպէս տվյալ պահին անհրաժեշտ գումար չի կարող լինել, քանի որ դրա զգալի մասը ծախսվում է գործի (արտադրության կամ առետրի) կազմակերպման վրա:

Իսկ ինչո՞ւ պիտի ներդրողները որոշեն ետ պահանջել իրենց գումարները: Իհարկե մտահոգվելով իրենց ներդրումների անվտանգութամբ: Իսկ ինչո՞ւ պիտի ներդրողները անհանգստանան: Իհարկե, եթէ կասկած առա-

ջանը, որ այդ կազմակերպությունը այն չէ, որպեսզի որ ներկայանում է: Օրինակ, բացահայտվեն նախաձեռնողների «թռնելու» ծրագրերը: Կամ պարզվի, որ կազմակերպությունը թեկուզ եւ արդար է գործում, բայց չի կարողանում ապահովել խոստացված չափի շահույթները: Կամ... եթե պարզապես բամբասանքներ տարածվեն այդ մասին...

Հասպա ինչպե՞ս տարբերել ազնիվ եւ անազնիվ նախաձեռնությունները: Ցավոք, դա չափազանց դժվար է: Կամ դա պիտի զգացվի ներըմբռնմամբ, ելնելով տարբեր աննշան թվացող փաստերից, ինչպիսիք են նախաձեռնողների մտավոր մակարդակը, արտաքինը եւ այլն, կամ էլ հնարավոր շահույթի գոյացման առաջարկվող եղանակների սթափ վերլուծությամբ: Պետք է նաեւ միշտ հիշել, որ շահույթները չեն կարող աճել չափազանց արագ: Դրանք պիտի համարժեք լինեն այն բարիքներին, որոնք մարդկությունը վերցնում է բնությունից: Եթե շահույթների աճի արագությունն ավելի մեծ է, գրեթե հաստատ առկա է խարդախություն: Կարող է նաեւ նախաձեռնությունը կիսախարդախ լինել, այսինքն տնտեսական իրական զարգացմամբ շահույթը պայմանավորված լինի միայն մասամբ: Շահույթների աճի հնարավոր եւ փաստացի արագությունների տարբերությունը հենց տալիս է մի երեւույթ, որը լրագրողները երբեմն անվանում են «հրաշք»:

Սա պետք չէ շփոթել մեկ այլ երեւույթի հետ, երբ հասարակությունը, որը դարերով ապրել է հողագործությամբ, ուստի եւ վարել գրեթե բնական տնտեսություն, սկսում է զարգացնել արդյունաբերությունը: Կենտրոնացնելով մի քանի անհատների ձեռքում շրջանառության մեջ գտնվող միջոցները հաջողվում է ստեղծել այնպիսի բարիքներ, որոնք անհնար էր ստեղծել՝ վարելով անհատական տնտեսություն: Կողքից սա իրոք հրաշքի է նմանվում, չնայած որ լրիվ օրինաչափ է: Այսպիսի «հրաշքների» օրինակներ են արեւելյան որոշ երկրների զարգացումները, հատկապես՝ Ճապոնիայի սրըթաց զարգացումը այսպես կոչված Մեյձիի հեղափոխությունից հետո: Ի միջի այլոց, այդպիսի «հրաշք» ապրել է եւ Հայաստանը՝ որը հեքիաթային նվաճումների հասավ 20-րդ դարի ընթացքում: Ի դեպ ա՛յս տեսակի «հրաշք» չի կարող զարգանալ անվերջ. այն սահամանափակվում է գիտության եւ արհեստի ներկա պահի հնարավորություններով, ինչը չի նկատվում նախորդ դեպքում, երբ «հրաշքը» օրըստօրե ավելի «հրաշալի» է դառնում, մինչեւ որ սպառվում է հասարակության միամտության պաշարը: Չնայած որ հանուն արդարության պետք է Նշենք, որ հասարակությունն ինքն է ստեղծում հնման արկածախնդրությունների բարեբեր հողը, չբավարարվելով զարգացման բնական արագություններով:

#### **Վերադառնանք մեր ոչխարներին**

Բայց ի՞նչ կապ ունի այս ամենը Ամերիկայի հետ:

Իսկ կապն անմիջական է: Բանն այն, որ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ստեղծվել էր չափազանց հետաքրքիր իրադրություն: Երբեմնի հզոր՝ գերմանական, ռուսական, ճապոնական տնտեսությունները փլատակների էին վերածված, ազգային արժույթների փոխարժեքները խելագար տատանումների մեջ էին, եւ մարդկանց ազնիվ քրտինքով վաստակած գումարները կուլ էին գնում այդ տատանումներին: Բայց կար մոլորակի վրա մի երկիր, որում տիրում էր հարաբերական անդորր եւ կայունություն: Դա Ամերիկայի միացյալ Նահանգներն էր: Հին Աշխարհի երկրների ազգային արժույթների կողքին դուլարը թվում էր անասան ու չափազանց հուսալի եւ ԱՄՆ-ին հաջողվեց ոչ թե առանձին վերցած երկրի, այլ ամբողջ աշխարհի հետ ՄՄՄ խաղալ. ՄՄՄ-ի մակարդակի արծակածախնդիրները երազներում էլ նման մաշտաբներով չեն գործել: Դուլարը դարձավ համաշխարհային ֆինանսական բուրգի տոմս: Ամբողջ աշխարհում բնակչությունն սկսեց իր խնայողությունները պահել դուլարի ձեւով: Այլ կերպ ասած, թեւեւ անկայուն, բայց իրական բարիքով ապահովված ազգային արժույթը եւրոպացիները, ասիացիները, աֆրիկացիները (հիշում ե՞ք արտահայտությունը. «դուլարը Աֆրիկայում էլ է դուլար») վաճառում էին նրանց, ովքեր դուլար ունեին: Դուլար ունենալը հույս էր տալիս, որ քրտնաջան աշխատանքով վաստակած գումարը փոխարժեքների տատանմանը կուլ չէր գնա: Եւ դա իրոք այդպես էր: Դուլարը կարելի էր ցանկացած պահին վաճառել, ընդ որում եթե վարպետորեն դա արվեր, այսինքն ճիշտ պահին վաճառվեր եւ նորից գնվեր, կարելի էր նույնիսկ շահույթ ստանալ այդպիսի գործարքներից: Այլ կերպ ասած դուլարն ուներ լիակատար «լիքվիդայնություն»։ ճիշտ ինչպես ՄՄՄ-ի տոմսերը:)-...

Լավ, ենթադրենք, բայց կարող է հարց առաջանալ. իսկ ինչո՞ւ է համարվում, որ ԱՄՆ-ը այդ բուրգը ստեղծել էր խարդախ նպատակներով: Ի վերջո, չէ՞ որ շնորհիվ ԱՄՆ-ի ֆինանսական քաղաքականության, շնորհիվ Մարշալի ծրագրի, բազմաթիվ երկրներ հասան բարգավաճ կյանքի՝ երբեմն բառի բուն իմաստով մոխիրից հառնելով, օրինակ՝ Գերմանիան:

Իրոք, ինչպես ասվեց բուրգի նախաձեռնողների ծրագրերը անհնար է բացահայտել անմիջականորեն, քանի որ դրանք արտաքուստ ոչնչով չեն տարբերվում արդար խաղացողներից: Դա կարող է արվել միայն անուղղակի նշաններն ուսումնասիրելով: Յուրաքանչյուրը կարող է իր դիտարկումները կատարել: Մեկը կարող է Մարշալի ծրագրի «մոտակայքում» գնտնվող «յոթնյակի», մասնավորապես հենց նույն Գերմանիայի անհամաչափ հարստության հետեւում տեսնել բուրգի գազաթնամեծ հատվածը: Մյուսը կարող է նկատել, որ ԱՄՆ-ը տարբեր «հասարակական» կազմակերպությունների կողմից տրվող բազմաթիվ դրամաշնորհները՝ «գրանտներ», որոնք թվում է թե տրվում են չիմնավորված շաղկապով եւ հիմարաբար, իրականում երկրորդ տիպի բուրգի կայունությունն ապահովող հետադարձ կապի միջոցներ են: Ոմանք կարող են վերջապես պատասխանը գտնել այն հանելուկի, թե ինչի՞ շնորհիվ է միջինից ցածր մտավոր ունակությունների տեր այդ ազգը հասել նման բարեկեցության...

Հիշենք նաեւ, որ թղթադրամը շրջանառության մեջ է դնում տվյալ երկրի կենտրոնական բանկը այն բանակությամբ, որպեսզի այն համապատասխանի երկրի արտադրության, առեւտրի, դրամաշրջանառության աշխուժության: Վերջինս կախված պիտի լինի, մասնավորապես, երկրի ազգաբնակչության քանակից: Ուրեմն այդ ինչպե՞ս կարող էր լինել, որ ամբողջ աշխարհն անցներ դուլարի: Այդ ինչպե՞ս էր, որ աշխարհի բնակչության հազիվ 5% կազմող երկրի դրամաշրջանառության համար նախատեսված թղթադրամն ըսկսեց բավարարել ավելի քան քսանապատիկ մեծ զանգվածի պահանջները: Արդեն իսկ այս փաստը հուշում է, որ աշխարհում շրջող դուլարների քանակը չի ապահովված ԱՄՆ, այսինքն մայր երկրի տնտեսությամբ: Այսինքն դուլարի արժեքը եսպես ավելի ցածր է,

քան համարվում է, եւ ամբողջ աշխարհի բնակչությունը իր ազգային իրական արժույթներով գնում է, ըստ էության, թուղթ:

Բայց ինչի՞ հաշվին է, որ դուրսն այսքան տարի այնուամենայնիվ չէր գիշում իր դիրքերը: Դա եղավ շնորհիվ մի քանի հանգամանքի: Նախ, ճիշտ կազմակերպման դեպքում (իսկ այն իրոք ճիշտ էր կազմակերպված) նման համակարգը կարող էր գոյատևել անվերջ, քանի որ մի կողմից գործում էր հետադարձ կապը, հավելյալ գումարը (շահույթը), գոյանում էր ամբողջ աշխարհի գիտության եւ արդյունաբերության բնական զարգացման հաշվին, իսկ բուրգը գործելով որպես պոմպ մղում էր այն դեպի գազաթանամերջ «յուրթնյակը»:

Բայց հիմնական, ինչպես միշտ, քաղթենու դյուրահավատությունն էր, որը եռանդաբար սնուցվում էր քարոզչությամբ, թե իբր ԱՄՆ-ը գերտերություն է, եւ նման հսկայի ազգային արժույթին չի կարող սպառնալ որեւէ վտանգ:

Մյուս կողմից գաղափարախոսական առանցք դարձվեց ազատության նվիրական գաղափարի շահարկումը եւ այսպես կոչված «մարդու իրավունքները». անհեթեթ պնդումների մի կույտ, որի միակ նպատակն էր «ամերիկյան կենսակերպի» դեմ պայքարող պետությունների ներքին գործերին խառնվելու պատրվակ ստեղծելը: Դա հնարավորություն էր տալիս «արդարության պատվարի» իրավունքով ամրապնդել բուրգի «ստորտը» տեղերում:

Վկայակոչվում էին նաեւ գիտության եւ արհեստի հաջողությունները. եղած ու հաճախ էլ՝ չեղած: Օգտագործելով տնտեսական եւ քաղաքական ճնշումը սկանդինավյան պետությունների վրա ԱՄՆ-ին հաջողվեց, օրինակ, բռնադատել Նոբելյան մրցանակների շնորհումը. այլընտրանքի դեպքում առավելությունը տրվում էր թեկուզ եւ աննշան, բայց ծագումով ամերիկացի հեղինակներին: Եւ միայն գիտնականների կամ գրողների բացահայտ հանճարի կամ, հակառակը, «չուկչա-ակադեմիկ» ունենալու անահրաժեշտության դեպքերում էր, երբ մրցանակակիր էին դառնում ոչ ամերիկացիները:

Դրանից բացի ժամանակ առ ժամանակ ԱՄՆ ցուցադրում էր նաեւ իր ռազմական ուժը: Դա արվում էր կամ որեւէ հզոր տերության, օրինակ՝ ԽՍՀՄ-ի կամ Չինաստանի վրա մատ թափ տալու միջոցով (լիովին Մոսկայի մասին ռուսական առակի սկզբունքով), կամ հարձակվելով մի որեւէ «ճ» կարգի պետության վրա. օրինակ՝ Լիբիայի, Նիկարագուայի, Գվատեմալայի: Երբեմն նաեւ քիչ ավելի խոշոր պետությունների վրա, օրինակ՝ Իրաքի, Վյետնամի, Սերբիայի: Սրանց հետ ընթացումը արդեն ոչ միշտ էր հաջող ստացվում: Բայց քարոզչությունը շտկում էր զինվորականների սխալները եւ բողարկում՝ բացահայտ պարտությունները, դեպքերը ներկայցնելով տրամագծորեն հակառակ կերպ:

Սակայն որքան էլ լավ էր կազմակերպված բուրգը, մի գեղեցիկ օր այն սկսեց քայքայվել: Ամեն ինչ սկսվեց այն օրը, երբ փլատակներից հառնած եւրոպական երկրների ղեկավարները լավ հասկանալով այս ամենը մտածեցին. «պո տելվիզորու պոկազիվայուտ ժուլիկով. նու չե՞մ յա խուժե», եւ որոշեցին, որ իրենք նույնպես կարող են ՄՄՄ խաղալ: Իսկ դրա համար պետք էր ձեռք բերել հեղինակություն «համաշխարհային քաղթենիության» աչքերում: Եւ դրա համար որոշվեց միավորվել. միավորվելը միշտ էլ ենթագիտակցորեն գնահատվում է որպես ուժի նշան (մենք հո գիտենք): Այսպես ստեղծվեց ֆինանսական նոր բուրգի տոմսը՝ «Եւրոն»: Սակայն քանի դեռ եւրոն անկանխիկ էր նրա փոխարժեքի գոյացման վրա չէր ազդում քաղթենիության մտածելակերպը եւ օգտվելով փաստացի առաջատարի առավելությունից ԱՄՆ-ին հաջողվեց որոշ չափով ընկճել նոր թղթադրամը. մասնավորապես՝ սանձազերծելով սերբական պատերազմը՝ Եւրոպայի հեց սրտում: Սակայն երբ շրջանառության մեջ մտավ կանխիկ եւրոն քաղթենիության մտածելակերպը սկսեց գործել: Երկու գրեթե հավասարազոր թղթադրամներից կարելի էր ընտրել թե՛ մեկը, եւ թե՛ մյուսը: Եւ հանկարծ, այ՛ թե՛ Նվեր. սեպտեմբերի 11: Պատահական էր դա թե՛ ոչ կարեւոր չէ, թե՛ն ինչպես ասում էր մի գրական հերոս «պատահականությունները պիտի տեղի ունենան միայն պատահականորեն»: Ինչպե՞ս: Սկսվում է բուրգի փլուզումը: Սակայն մինչեւ վերջ դա դեռ չի գիտակցվում: Ինչպես նույնիսկ 1991-ի աշնանը չէր գիտակցվում, որ «ցենտր մյորով», այնպես էլ այսօր տնտեսագետ (այն է՝ բուրգագետ) համարվող անձինք շարունակում են պնդել, թե նման վայրիվերումներ ԱՄՆ-ի պատմության մեջ միշտ էլ եղել են, ու սա ընդամենը դրանցից մեկն է. այ՛ հեսա մի քանի ամիս հետո տես՛ք ինչ վերելք կլինի: Մի այդպիսի «բուրգագետ» նույնիսկ հաշվել էր, թե ամերիկյան տնտեսությունը տասներկու տարին մեկ անկում է ապրում եւ սա պարզապես հերթական (իմա՝ օրինաչափ) անկում է: Այս բուրգագետներին կարելի է խորհուրդ տալ «հայտնաբերել» ոչ թե տասներկուամյա, այլ տասնմեկամյա պարբերաշրջան. այդ դեպքում դրանք հնարավոր կլինեն կապել արեւի ակտիվության պարբերաշրջանի հետ. ավելի տպավորիչ կլինեն:

Սակայն այդ «տնտեսագետները» չեն նկատում, կամ չեն ուզում նկատել, որ այսօրվա անկումները Եսպես տարբերվում են օրինակ, անցած դարի երեսնական թվականների «մեծ դեպրեսիայի» դեպքերից: Այսօր ոչ թե հիմնարկություններ են կործանվում, այլ հավատը ամերիկյան տնտեսության հիմնական սյան՝ կորպորացիաների եւ շուկայական համակարգի նկատմամբ: Մասնավորապես, նրանց, գործունեության, իբր «թափանցիկության» նկատմամբ:

Յետո տրաքեց այսպես կոչված «բարձր տեխնոլոգիաների» շահութաբերության փուլիկը: Եւ իրոք, չե՞ որ այդ հիմնարկները անմիջականորեն բարիք չեն ստեղծում, այլ միայն օգնում են մյուսներին բարիք ստեղծել: Այսինքն իրենք պիտի ստանան ընդհանուր հավելյալ բարիքին համապատասխանող շահույթի մի մասը միայն, որն ինչպես ասում էր Օստապ Իբրագիմովիչը պիտի ամբողջից փոքր լինի: Մինչդեռ այն ոչ միայն փոքր չէր, այլեւ գերազանցում էր բոլոր խելամիտ սահմանները: Սա արդեն պիտի կասկածելի լիներ: Ի վերջո ի՞նչ է ծրագիրը, եթե ոչ գրված տեքստ: Մի խոսքով, արածո՞ր գի՞ր չի. գրածո՞ր տեքստ չի՞: Բա էր ո՞րտեղից այդ միլիարդները, որը կուտակում են Բիլլ Գեյթսի Մայկրոսոֆթը եւ համանման ընկերությունները:

Ումանք համաձայնվում են, որ դուրսի փոխարժեքը ուռճացված էր: Ա՛յ ասում են ամերիկացիները ստիպված կիջեցնեն դուրսի արժեքը երկու-երեք անգամ, կհասցեն դրա իրական մակարդակին, հետո կսկսի տնտեսության աճը: Մոռանալով, որ դուրսի փոխարժեքը ոչ թե ուռճացված է, այլ աներեւակայելի է ուռճացված եւ նրա իրական փոխարժեքը պիտի որ մոտավորապես այնքան ծածո լինի այսօրվա արժեքից, որքան ԱՄՆ-ի բնակչությունը փոքր է ամբողջ աշխարհի բնակչությունից. մոտ տաս-քսան անգամ: Այսինքն՝ ռուսական ռուբլու արժեքին մոտ:

Մյուս կողմից, այդպիսի հույսեր ունենալ, նշանակում է թերագնահատել ամբոխի խուճապային ալիքի ուժը: Այսօր անվճար յուրաքանչյուր օր եւ նույնիսկ ժամ մոտեցնում են կործանումը: ԱՄՆ-ի միակ փրկությունը սեփական հեղինակության պահպանումն է: Եւ դրա, փաստորեն միայն երկու միջոց կա. շարունակել ռազմատենչ շարժումները, ռմբակոծելով մերթ՝ Սերբիան, մերթ՝ Աֆղանստանը, մերթ՝ Իրաքը, մերթ մատ թափ տալ Իրանի, Յյուսիսային Կորեայի վրա: Կամ՝ պատրաստելով տիեզերական պաշտպանության համակարգ: Նաեւ՝ դիվանագիտական ճանապարհով, համոզելով հզոր երկրներին, օրինակ՝ Ռուսաստանին դրականորեն արտահայտվել ամերիկյան տնտեսության ներուժի մասին, իսկ հարուստ տնտեսություն ունեցող Ճապոնիային համոզել գնել դոլարներ: Բայց այս միջոցների հնարավորություններն էլ անսպառ չեն: Ճապոնացիները չեն կարող չգիտակցել, որ իրենց ձեռք բերած դոլարները մեկ ակնթարթում կարող են թուղթ դառնալ, ու հազիվ թե երկար շարունակեն գնել դրանք: Իսկ Ռուսաստանը արդեն աստիճանաբար անցնում է եւրո գնելու խաղին. չէ՞ որ ով մոտ լինի բուրգի գազաթին, նա էլ կշահի: Եւ այսօր Ռուսաստանն ավելի է մտահոգված իր հարաբերություններով Եւրոպայի, քան թե ԱՄՆ-ի հետ:

Արդյունքում, ամենայն հավանականությամբ տեղի կունենա բուրգի փլուզում:

#### **«Գերտերության» «ռազմական» «հաղթանակները»**

Սակայն ԱՄՆ-ը այլընտրանք չունի: Գուցեւ գիտակցելով այս ամենը ԱՄՆ-ը շարունակում է ապավինել իր միակ հաղթաթղթին՝ ռազմական ուժի ցուցադրությանը: Եւ իրոք, շատերի վրա դա չգիտես ինչու դեռեւս տպավորություն թողնում է: Մինչդեռ սա, Ամերիկայի, աշխարհի, իբր ամենահզոր պետությունը լինելը, թերեւս ամենազավեշտական առասպելն է: Չավեշտական, քանի որ այս ասպարեզում ի տարբերություն, օրինակ, տիեզերագնության կամ հաշվողական տեխնիկայի ասպարեզների ԱՄՆ-ը *անհասարակ* որեւէ լուրջ հաջողություն չի ունեցել իր ողջ պատմության ընթացքում:

Եւ իրոք: Գոյացման սկզբնական փուլում ամերիկացիները ընդլայնում էին իրենց տարածքը հիմնականում գնելով որոշ երկրամասեր (որոնցից մեզ ամենահայտնի դեպքը՝ Ռուսաստանից Ալյասկայի ձեռքբերումն է), զուգորդելով դրանք գրեթե անզեն հնդկացիներին վերացնելու եւ խաբելու միջոցով նորանոր տարածքների տիրանալու քաղաքականությամբ: Պատահում էին նաեւ մանր ընդհարումներ մերթ մեթսիկացիների, մերթ՝ ֆրանսացիների հետ. բայց դրանք լուրջ պատերազմ չեն անվանի: Դրանից հետո եղավ քաղաքացիական պատերազմը, որը թերեւս ամենալուրջ ռազմական ընդհարումն էր, որին այս երկիրը, եթե այդպես կարելի է ասել, մասնակցել է: Սակայն քաղաքացիական պատերազմներում, ինչպես հայտնի է, հաղթողներ չեն լինում...

20-րդ դարի սկզբում ԱՄՆ-ը մի քանի ռազմական գործողություն անցկացրեց Կուբայի, Գայիթիի նկատմամբ: Սակայն բավական է հիշել այլ երկրների չափերը, որ պարզ լինի, թե դրանք ինչ պատերազմներ պիտի լինեին:

Առաջին անգամ ամերիկացիները առիթ ունեին մասնակցել լուրջ պատերազմի առաջին աշխարհամարտի ընթացքում, բայց իրենց բնորոշ մոտեցմամբ պատերազմ հայտարարեցին Գերմանիային շատ ուշ, երբ պարզ էր, թե ովքեր են հաղթելու, եւ բուռն մասնակցություն ունեցան գերմանական «կարկանդակի» բաժանման ընթացքին միայն:

Յետո փորձեցին մասնակցել «ինտերվենցիային» Խորհրդային Ռուսաստանի դեմ, եւ կրկին ոչ մի հաջողություն, մեղմ ասած, չունեցան:

Նույն սկզբունքով նրանք մասնակցեցին նաեւ երկրորդ աշխարհամարտին, կրկին ձգտելով չուշանալ Եւրոպայի բաժանման արարողությունից: Սակայն ունենալով, թվում էր, առույգ եւ ուժասպառ չեղած բանակ չկարողացան իրագործել իրենց հիմնական խնդիրը՝ ռուսներից առաջ Բեռլին մտնելը: Սա կարելի գնահատել, որպես լիակատար պարտություն, չնայած որ այդ հանգամանքը սովորաբար չի նկատվում: Հաջողության հասնելու համար իրենք պիտի գոնե մի քանի ամսով շուտ սկսեին իրական մասնակցությունը պատերազմին, սակայն այն ժամանակ Գերմանիան դեռ բավական ուժեղ էր եւ կարող էր պատասխան լուրջ հարված հասցնել: Մինչդեռ մեկ այդպիսի հարված՝ Պըրլ Յարբըրում՝ Ճապոնիայից նրանք արդեն ստացել էին, ու եւս մի հարված ստանալու հեռանկարը նրանց պարզագույն սարսափեցնում էր: Այս պատերազմն ամերիկացիները ավարտեցին «հերոսաբար» կատարելով մարդկության պատմության ընթացքում ամենանոխկալի ոճրագործությունը, վրեժխնդրության կարգով ոչնչացնելով Խիրոսիման եւ Նագասակին, եւ մնալով մինչ այսօր միջուկային զենք կիրառած միակ պետությունը (ինչը սակայն նրանց չի խանգարում մեղադրել մերթ՝ Իրաքին, մերթ՝ Յյուսիսային Կորեային, թե իբր սրանք պատրաստվում են միջուկային հարվածներ հասցնել իրենց հարեւաններին. ռուսի ասած. «յա բի կորովա միչալա»): Բայց նույնիսկ այսքանից հետո նաեւ Ճապոնիային նրանք չհաղթեցին, չնայած որ լիովին օգտվեցին ռուսների հաղթանակից: Ի՞նչ ասես. հալալ ա:

Յետո սկսվեց այսպես կոչված «սառը պատերազմը»: Թե դա ի՞նչ բան է, պարզ չէ: Պատերազմը կամ կա, կամ չկա: Իսկ թշնամական պետությունների հեռակա մրցակցություն միշտ էլ լինում է, բայց դա ոչ ոք պատերազմ չի անվանում: Օրինակ, կարելի՞ է ասել, որ Թուրքիան եւ Իրանը, կամ Թաիլանդը եւ Կամբոջան գտնվում են «սառը պատերազմի» վիճակում: Եւ ահա ամերիկյան քարոզչությունը ներշնչում է, որ այդ տարօրինակ պատերազմը ոչ միայն եղել է, այլեւ ամերիկացիներն այն, իբր, շահել են: Բայց կարծես թե Արծվի եւ Կաղնու հայտնի առակը լինի...

Վերջապես ԱՄՆ-ը մասնակցեց նաեւ մի երկու քիչ թե շատ իսկական պատերազմների՝ Վյետնամի եւ Սերբիայի դեմ: Վյետնամում ԱՄՆ-ը պարզապես պարտվեց, եւ դա հնարավորություն է տալիս գնահատել, թե մոտավորապես որ կարգի պետության ռազմական ուժին է իրականում համապատասխանում ԱՄՆ-ի ռամական մեթենայի ուժը: Ընդ որում իմաստ չունի պնդել, թե Վյետնամին օգնում էր ԽՍՀՄ-ը. պատերմող երկրները միշտ էլ իրավունք ունեն դաշնակիցներ ունենալ:

Իսկ Սերբիայի հետ պատերազմը կարող է հաղթական անվանել միայն խիստ միամիտ անձնավորությունը: Նախ, օդային զրոհն ապարդյուն անցավ. նույնիսկ իրենք, ամերիկացի զինվորականները ստիպված էին խոստովանել, որ մի քանի ամիս տեսած ռմբակոծությունների արդյունքում Սերբիայի հակաօդային պաշտպանությունը

տուժել էր հազիվ 10 տոկոսով (դեռ չհաշված սերբերի կողմից խփած ինքնաթիռները, ներառյալ գովերգած «սթել-զը»)։ Եթե որոշ հաջողություններն էլ եղել են, ապա դրանք սոսկ դիվանագիտական էին. այն էլ սերբերի վրա Ռուսաստանի ճնշման շնորհիվ։ Բացահայտ առուժախի արդյունքում ԱՄՆ-ին հաջողվեց փրկվել մոտալուտ խայտառակությունից (արդեն պարզ էր, որ առանց ցամաքային գործողությունների ոչինչ չի ստացվի, ու պարզ էր նաեւ, որ մարտատենչ սերբական բանակի դեմ, որը միշտ էլ համարվում էր երոպական ուժեղագույն բանակներից մեկը, մամայի բալաներից բաղկացած ամերիկյան բանակը անգոր է), իսկ ռուսները ծախելով Միլոշեվիչին փոխարենը ստացան Կոսովոյի նախապես որոշված բոլոր հինգ հատվածներում ռամական ներկայության իրավունք, ի դեմս այսպես կոչված «խաղաղարարների»։ Մի բան, որ բացարձակապես ամերիկացի խրոխտ գեներալները չէին նախատեսում։ Իհարկէ քարոզչությունը արեց ամենը, որպեսզի ամերիկյան այս հերթական պարտությունը ներկայացվի որպես հաղթանակ, իսկ որոշ ուշացումով վերացվեն նաեւ հետեւանքները, եւ դա *գրեթե* հաջողվեց։

### Սեպտեմբերի 11-ից հետո

*Գրեթե*, քանի որ սեպտեմբերի 11-ը ի չիք դարձրեց այդ ամենը։ Միշտ էլ պարզ էր, որ իր հողում թշնամու հարված չտեսած այդ երկիրը կարող էր կործանվել մեկ ռուսի պայթյունով։ Չնայած որ դժվար էր պատկերացնել, որ այդ կասկածը այդքան մոտ է իրականությանը։ Պարզ էր, որ այդ երկրի բնակիչները թողել են իրենց հայրենիքները եւ հասել են այդտեղ միայն ապահով ու ձրի ապրելու համար եւ ցանկացած արհավիրք, որը կասասներ այդ պատրանքը, կարող է կործանել ողջ համակարգը։ Այդպես էլ եղավ։ Եւ սկսած այդ օրից ամերիկյան «տնտեսությունը», այն է՝ բուրգը, ավելի ու ավելի է գիջում իր բոլոր դիրքերը։

Եւ այսօր ԱՄՆ-ի միակ փրկությունը քաղաքական եւ տնտեսական սասանված հեղինակության վերականգնումն է, որի միակ ճանապարհն է պատերազմը։ Սեպտեմբերի 11-ից հետո անմիջապես պետք էր միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ եւ արվեց առաջին հապճեպ գործողությունը՝ Աֆղանստանի գրավումը, որը չափազանց զավեշտական կերպով ավարտվեց. մայրաքաղաք Զաբուլ առաջինները մտան կրկին ոչ թե ամերիկացիները, եւ նույնիսկ ոչ «հյուսիսային դաշինքի» զորամասերը, այլ ինչ որ առեղծվածային զորամիավորում, որը մինչ այդ ռազմական թատերաբեմում չէր երեւում եւ հետո էլ անհայտացավ։ Կամ էլ, ով գիտի, այն դեռ շարունակում է այնտեղ մնալ բայց այնքան բացայտորեն, որ ոչ մեկի մտքով չանցնի, թե դա հենց այն հաղթական ջոկատն է...

Եւ ահա Ամերիկյան պատրաստում է հաջորդ միջոցառումը՝ Իրաքյան երկրորդ պատերազմը։ Զարոզչությունը փորձում է նախապես ներկայացնել սպասվելիք պատերազմը որպես հաղթական։ Խոսվում է, թե ինչ ժամկետում են գրավելու Իրաքը. ենթադրվում, որ, դե, հաղթելու է, բա ո՞նց։

Եւ իրոք հետաքրքիր է, թե այդ ոնց։ Ինչու է, իրոք, ենթադրվում, որ այդ պետությունը, որն ինչպես տեսանք իր պատմության ընթացքում չի ունեցել ոչ մի ռազմական հաջողություն, որն այդ նույն Իրաքին չկարողացավ ծնկի բերել տասներկու տարի առաջ, պիտի կարողանա անել դա այս անգամ։ Դավանաբար ամերիկացիների հույսը կամ Դարավսալավական տարբերակն է, կամ էլ ներքին ուժերի ձեռքով Սադդամի չեզոքացումը։

Զարոզչությունը եւս մի հնարք է կիրառում. մի կողմից Իրաքի դեմ պայքարը ներկայացվում է որպես հակահաբեկչական եւ ամերիկյան քարոզչության խոսափող-քաղաքագետները ամբողջ աշխարհում փորձում են հիմնավորել նախահարձակ լինելու անհրաժեշտությունը։ Միաժամանակ, տեղեկության անրտահոսք է կազմակերպվում, թե, իբր իրականում դա պատերազմ է նավթի համար։ Այսպիսով հանրության ուշադրությունը շեղվում է հիմնական նպատակից, որն ինչպես տեսանք կապ չունի ոչ նավթի, ոչ էլ ահաբեկչության հետ։

Պատերազմելիս միշտ էլ փորձում են բողբոկել իրական նպատակը, որը սովորաբար կամ տարածքն է լինում՝ ամենամեծ հարստությունը, որն ունի ազգը, կամ էլ առեւտրային ուղիների վերահսկումը։ Իսկ պատրվակները կարող են տարբեր լինել. նավթ, ոսկի, ադամանդներ... Իհարկէ, չի բացառվում, որ Վաշինգտոնում ոմանց հետաքրքում է նաեւ տարածքը։ Այն էլ այսպիսի հանգուցային տարածք, ինչպիսին Միջագետքն է, որն իր երկրաբաղաբական բացառիկ դիրքի շնորհիվ միշտ էլ եղել է քաղաքակրթության սիրտը։

Իսկ նա՞վթը... Նախ եւ առաջ, Իրաքյան նավթի մասնաբաժինն աշխարհում վճռորոշ չէ։ Մյուս կողմից նավթի «համը» հասկացել են ընդամենը մի երկու դար առաջ, իսկ քիչ թե շատ լրջորեն արդյունահանում են հազիվ մի 100 տարվա ընթացքում։ Մինչդեռ եւ հազար եւ երկու՛, չորս, հինգ հազար տարի առաջ աշխարհի պետությունները պատերազմել են միմյանց հետ։ Մեր դեպքում, Իրաքի (եթե կուզեք՝ Ուրուքի) համար պատարազմել են. ե՛ւ փարավոնները, ե՛ւ Ալեքսանդր Մեծը, ե՛ւ Զոռոնը, ե՛ւ Իրանը, ե՛ւ արաբները, ե՛ւ թուրքերը, եւ նույնիսկ մենք, հայերս (պատկերացրեք որ, նման դեպքեր էլ են եղել)։ Ոմանք հաջողությամբ, ոմանք՝ ոչ այնքան։ Այժմ էլ դա անում են ամերիկացիները. ինչ կա ո՞ր. բնական է։ Նաեւ պետք է նկատի ունենալ, որ այս պատերազմի նավթային վարկածը հարմար է նաեւ այլ պետություններին՝ Եւրոպային, Ռուսաստանին, քանի որ դրանց ծրագրերը Իրաքի նկատմամբ քիչ են տարբերվում ամերիկյանից։ Ուստի եւ նպատակ չի դրվում հերքել այն։

### Ինչպես կարող են զարգանալ դեպքերը։

Դեռ որոշ ժամանակ դուլարը կդիմադրի. իրոք որ աներեւակայելի մեծ է վստահության պաշարը ԱՄՆ-ի տնտեսական եւ ռազմական ներուժի նկատմամբ։ Իմ դիտարկումների համաձայն (որոնք շարադրված են 1994 թվականին «ՀՀ»-ի եւ հետագայում «Կառավարում» ամսագրի էջերին) վերջնական անկումը պիտի լիներ մոտ 2008-ի շրջանում։ Սակայն նման հարցերում կանախատեսումների շեղումները կարող են հասնել մի քանի տարվա։ Միաժամանակ հավանական չէ, որ դա լինի նաեւ մոտակա օրերին. աշխարհի իրական գերտերություններին՝ Ռուսաստանին, Եւրոպային, Չինաստանին ձեռնտու չէ ԱՄՆ-ի եւ դուլարի ակնթարթային մահը, քանի որ դա կարող է անկանխատեսելի հետեւանքների բերել։ Նրանք բոլոր ջանքերը կգործադրեն (եթե կարողանան), որպեսզի ԱՄՆ-ի երթը դեպի քաղաքական գերեզման ընթանա առանց ցնցումների։ Իսկ գերեզմանն այդ կարող է մի քանի տեսք ունենալ։

ա. ԱՄՆ-ը աստիճանաբար հանգչում է ինչպես ծերացած մի մարդ, այնպես որ շրջապատում բոլորը հոգեպես եւ կյուրապես պատրաստվում են նրա մահվանը, եւ Ամերիկյան վերածվում է իր իրական հնարավորություն-

ներին համապատասխանող միջին զարգացվածության մի պետության, ինչպիսին են ներկայիս Մեքսիկան, Բրազիլիան կամ Իրանը:

բ. Իրագործվում է նախորդ հնարավորությունը, այն տարբերությամբ, որ Եւրոպան եւ Ամերիկան հասնում են որեւէ սկզբունքով աշխարհի բաժանման եւ համաշխարհային երկու բուրգերը գույատեւում են զուգահեռ: Իսկ բնակչությունն էլ արդեն ինքն է որոշում, թե ո՞ր բուրգի տոմսերով պահի իր ունեցվածքը. դուլարով, թե՛ եւրոյով: Սա թերեւս ամենահարմար տարբերակը կլինէր սովորական մարդու տեսակետից եւ կբացառէր լուրջ ցնցումները դուլարի՝ որպէս բուրգի տոմսի (այլ ոչ թե ԱՄՆ-ի ազգային արժույթի) կործանման դեպքում: Սակայն նման վիճակը թերեւս շատ անկայուն կլինի. «Բոլիվարը երկուսին չի դիմանա». երկու բուրգերից մեկն այնուամենայնիվ կկործանվի:

բ. Քայքայումն ընթանում է անվերահսկելի կերպով: ԱՄՆ-ում սկսում են ներքին քաղաքական բախումներ: Դրանց արդյունքում երկիրը մասնատվում է այն նույն մասերի, որոնցից եւ գոյացել էր. կրկնելով իր կայացման պատմությունը՝ հետադարձ շարժանկարի կարգով: Սկզբում անջատվում են ամենաանջատողական նահանգները, որոնք միշտ էլ հարմար պահի էին սպասում անջատվելու համար: Նախ եւ առաջ դա մեքսիկացիներով բնակեցված Տեխասն, ու պատմական Լուիզիանան: Տեխասը կհայտարարի իր անկախության մասին, բայց հավանաբար շատ շուտով կկլանվի Մեքսիկայի կողմից: Երկրորդն ամենայն հավանականությամբ կլինի Կալիֆորնիան, որն անջատվելու հետո անմիջապէս ինքն էլ կտրոհվի հավանաբար երկու քաղաք-պետությունների՝ Սան-Ֆրանցիսկո եւ Լոս-Անջելես: Սրանց անջատվելուց հետո կպարզվի, որ Միսիսիպիից դեպի արեւմուտք գրեթէ դատարկ մի տարածությունը է, որը որոշ ժամանակով առահասարակ անտեր կմնա: Արեւելյան՝ հիմնադիր նահանգները գուցէ կարողանան պահպանել միասնությունը, բայց կարող են եւ տրոհվել ավելի փոքր միավորումների. նախախապէս, հավանաբար՝ Զյուսիսային եւ Զարավային միությունների:

գ. Չզարվ մոտալուտ վախճանը ԱՄՆ-ը ռազմական հուսահատ բացահայտ (այլ ոչ թե սերբական պատերազմի նման) հարձակում է գործում իր համար մեկ թշնամու՝ Եւրոպայի վրա, պատերազմի մեջ ներթաշէլով նաեւ Ռուսաստանին: Բայց սա թերեւս ամենամահավանական տարբերակն է:

Շատ բան է կախված մասնավորապէս Իրաքյան հնարավոր պատերազմից եւ Եւրոպայի ու Ռուսաստանի դիրքորոշումից: Մի քանի տարի առաջ եւ կանխատեսել էի, որ Ամերիկա-Ռուսաստան դիմակայությունը (հետաքրքիր է չէ՞. «սառը պատերազմը» ավարտվել է, իսկ դիմակայությունը մնում է) կընթանա Եւրոպային տիրանալու ուղղությամբ եւ որ Ռուսաստանին դա ավելի հեշտ կլինի անել: Եւրոպան կպահ է Ռուսաստանին աշխարհագրորեն ու նաեւ հումքային կախվածության մեջ է: Ապա Ռուսաստանը կփորձի դառնալ ՆԱՏՈ-ի անդամ, իսկ հետո նաեւ դուրս կմղի այնտեղից ԱՄՆ-ին, քանի որ երկու գերտերություն (իսկ Ռուսաստանը գերտերությունը է, որքան էլ ամերիկյան քարոզչությունը փորձի հակառակը պնդել) մի դաշինքի մեջ լինել չեն կարող: Եւ այսօր Ռուսաստանը արդեն ՆԱՏՈ-ի անդամ է (չնայած որ դիվանագիտորեն փորձում է համոզել, թե դա այդպէս չէ, եւ «քսանյակի» անդամ լինելը դեռ ոչինչ չի նաշանակում, եւ դա իրեն առհասարակ պետք էլ չի), եւ ՆԱՏՈ-ն էլ այսօր պառակտված է եւ հիմնական պետությունները ընդունել են Ռուսաստանի կողմը (համենայն դեպս Իրաքի հարցում): Տպավորություն է ստացվում, որ մի կողմից դաշնակիցները վախենում են ԱՄՆ-ի անսպասելի փլուզումից, բայց եւ չեն կարող թույլ տալ, որպէսզի այն ոտքի կանգնի: Եւ լավ հասկանալով, որ Իրաքի պատերազմի չկայանալու դեպքում ԱՄՆ-ը լրիվ արդեն հեղինակագրկված կլինի, ուստի եւ տնտեսապէս տապալված, ամեն ինչ անում են այն կանխելու համար: Դա հասկանում է եւ Սադդամը, որը նույնպէս համաձայնվում է ամեն զիջման՝ հետաձգելու համար պատերազմը, որը սակայն, ինչպէս ասացիք դեռ հայտնի չէ, թե ինչ ավարտ կունենա: ԱՄՆ-ի հաղթանակը կարող է համենայն դեպս որոշ ժամանակով դուրս բերել նրա տնտեսությունը ճգնաժամից, ու հազիվ թե դաշնակիցներին դա ձեռնտու լինի: Իսկ պարտությունը կարող է կործանարար լինել նաեւ դաշնակիցների համար. չափազանց մեծ է դեռեւս իրենց տնտեսությունների կախվածությունը դուլարից. այն դեռ ուժեղ է: Այդ իսկ պատճառով չի բացառված, որ պատերազմի դեպքում դաշնակիցներն անեն ամեն ինչ, որպէսզի այն երկարաձգվի, ինչը դժգոհություն առաջացնելով ԱՄՆ-ի ներսում էլ ավելի կթուլացնի նրա տնտեսությունը, բայց ի վերջո դաշնակիցները կլքեն Սադդամին, որն իրենց աչքի լույսն էլ չէ, եւ թույլ կտան, որ Ամերիկան գոնե մի քիչ հրճվի հաղթանակով, որը թերեւս կարող է նրա պատմության մեջ առաջինը լինել: Բայցեւ, հավանաբար՝ վերջինը:

Սակայն ԱՄՆ-ը կարծես թե նախապատրաստել է դաշնակիցների համար մի շատ զորեղ հակահարված, որին սակայն կդիմի միայն ծայրահեղ դեպքում: Խոսքը ներկայումս դուլարների նախապատրաստվող փոփոխությունն է, եւ «գունավոր» դուլարների շրջանառության մեջ մտցնելը: Այսօր հայտարարվում է, որ նոր դուլարները թողարկվում են, իբր, միայն կեծիքներից նրանց պաշտպանվածությունը բարձրացնելու նպատակով, եւ հին «կանաչ» թղթադրամները շարունակելու են մնալ շրջանառության մեջ: Իսկ թե՞ ո՞չ: Մի՞թէ մենք պարտավոր ենք հավատալ:

Դժվար չի պատկերացնել, թե դա ինչի կարող է հանգեցնել: Դուլարը կներփակվի Ամերիկայում, ինչպէս ռուբլին տասը տարի առաջ պարփակվեց Ռուսաստանի սահմաններում: Արդյունքում ճիշտ է, ԱՄՆ-ը կկորցնի իր ստեղծած շահութաբեր բուրգը, բայց դրանով իսկ կկարողանա համենայն դեպս որոշ ժամանակով խաղից դուր հանել նաեւ իր թշնամի եւրոն ու Եւրոպային, որը դեռեւս չափազանց կախված է դուլարից: Իսկ հետո արդեն նայած թե ո՞վ առաջինը ոտքի կկանգնի...

*3.9. Այս հոդվածը սկսեցի գրել սեպտեմբերի 11-ից հետո: Եւ ոչ մի կերպ չէի կարողանում ավարտել: Նախ, իհարկե, ժամանակի սակավությունն էր պատճառը, բայց նաեւ այն հետաքրքրությունը, որով հետեւում էի դեպքերի զարգացմանը, որոնք հաջորդում էին մեկը մյուսին ինչպէս հոլիվուդյան շարժանկարում: Իսկ վերջնականապէս որոշեցի ավարտել, երբ կործանվեց «Կոլումբիան». ախր դրանց բախտը հեջ չի բերում...*